ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N Ն

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել

1/ Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի,

2/ Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագրի միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N870-Ն որոշման 112-րդ և ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N34 արձանագրային որոշման 13-րդ կետերի։

Ներկայումս Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայ գիտնականների միջև գիտական համագործակցությունն իրականացվում է անհատ գիտնականների կամ գիտական կազմակերպությունների նախաձեռնությունների մակարդակով։ Այդ համագործակցության համակարգման, ընդլայնման ու զարգացման համար անհրաժեշտություն է ծագել մշակելու միջոցառումների համալիր ծրագիր։

Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագրի շրջանակներում կիրականացվի արտերկրի հայ գիտնականների գիտական գործունեությունը նկարագրող տվյալների հավաքագրում և բազայի ստեղծում, որը կտրամադրվի գիտական կազմակերպություններին գիտական համագործակցության խթանման ու ընդլայնման, գիտական նոր կապերի հաստատման, միջազգային փորձի փոխանակման, որակյալ գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման համար։

Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագրի ընդունումն ու իրականացումը կնպաստի Հայաստանի և օտարերկրյա պետությունների հայագիտական կենտրոնների համագործակցության սերտացմանն ու համատեղ հետազոտությունների իրականացմանը, սփյուռքահայության ստվար հատվածի հետ կապերի ընդլայնմանն ու խորացմանը, արտերկրի հայ գիտնականների գիտելիքների, փորձի և հնարավորությունների օգտագործմանը պետության համար կարևոր հիմնախնդիրների լուծման գործում։

Սպարտակ Սեյրանյան